

20—50 կոպէկ մի խնձորի մէջ խրած տանում էին մելիքին, նրա նոր տարին շնորհաւորելու: Նա էլ հիւրասիրում էր բոլորին, ճաշ տալով:

ՊԵՏՄԵԿԱՆ ԸՆԸՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀՐՈՒՋԱՆ ԵՒ ԶՈՆԳԻ ԳԻՔԻ.

Սաղսաղան լեռան գագաթին երկու ահագին, միմեանց կից ժայռ են բարձրանում, որոնց վերի մասերը միացած են մի արհեստական պատով, այնպէս որ կազմել են մի փոքրիկ սենեակ: Ըստ դժուար և նոյն իսկ անհնարին է այդ տեղ բարձրանալ: Աւանդաբար պատմում է, թէ այդ տեղ բնակելիս է եղել հրուշան անունով մի հսկայ, որին ժողովուրդը վիշապ է անուանել:

Սա չբաւականանալով իւր այդ բնակարանով՝ նրա հանդէպ, Քարահող լեռնաշղթայի վերայ, մի փոքրիկ տափարակ տեղում, բնական ժայռ քարերի վրայ իւր համար մի ուրիշ բնակարան է շինել, մօտ 5 քառակ. մետր մեծութեան երեք քար ձգելով՝ և սրանց վերայ մի ուրիշը կանգնեցնելով¹⁾: Երբեմն այստեղ և երբեմն Սաղսաղանի գլխին ապրելով՝ սա մեծ վնասներ է հասցրել շրջապատող ժողովրդին, սպանելով և թալանելով ամէն մի անցորդի: Քաջութեան հետ նա ունեցել է և հնարաղիտութիւն: Այսպէս, մի անգամ մի մեծ կարաւան հեռուից նրան նկատելով՝ վախից չետ է դառել: Իսկոյն հրուշանը իշի մի համետ է գլորել ժայռից ներքև և մի կաթսայ մածուն վաշթափել և ինքն անմիջապէս թաք կացել: Կարաւանը այս տեսնելով՝ կարծել է, թէ առաջուայ երևացողը ոչ թէ ինքը հրուշանն է եղել, այլ մի թռչուն (ղուզղուն), որ իսկոյն թռել և նոյն իսկ ծրտել է: Սիրտ առած՝ կարաւանը առաջ է գնում. բայց յանկարծ հրուշանը, երկար և ծանր նիզակը ձեռին՝ կտրում է առաջները, մօտ երկու հարիւր մարդ սպանում և ամբողջ կարաւանը թալանում: Բայց հրուշանի աւերածութիւնները սրանով չեն վերջանում: Ահ ու սարսափը տիրում է ամբողջ շրջակայքի վրայ և ոչ ոք չէ համարձակում դուրս գալ իւր գիւղից: Վերջապէս՝ հրուշանի քրոջ որդին, զարաղշլախցի Թա-


¹⁾ Սա իսկապէս հին դարերից մնացած մի դուռն է:

ղունց Գիքին, որ յետոյ Զոնգի (վիթխարի) Գիքի է մականուանուել՝ վճռում է չրուշանի կեանքին վերջ գնել: Այս նպատակով 12 հատ մեծ բիշի (իւղի մէջ թրխուած հաց) է պատրաստել տալիս և շալակած տանում չրուշանին: Հասնելով այն ձորը, որ մինչև այժմ էլ չրուշանի անունով կոչւում է չրուշանի ձոր, Զոնգի Գիքին բղաւում է մօրեղբորը, որ իջնէ ժայռից և քրոջ ուղարկած բիշիներն ուտէ: Չրուշանը հաճոյքով իջնում է ժայռից, գալիս նստում ձորում, նիզակը դնում մի կողքին և վերցնելով 12 բիշին՝ մի բրդուճ է անում, և հէնց որ մի անգամ կծում է՝ բիշու ծայրերն են մնում ձեռին: Իսկ Զոնգի Գիքին ուժ ու կող արած բարձրացնում է նիզակը և ասում. «Ամի, ինչ ծանր է, ինչպէս ես բարձրացնում»:

— Քիչ սպասիր, կը տեսնես, պատասխանում է չրուշանը: Սակայն այս միջոցին Զոնգի Գիքին ձգում է նիզակը մօրեղբօր ծնկներին և ուզում է փախչել: Չրուշանը իսկոյն երկարացնում է իւր ձեռքը և նրան քղանցքից բռնում: Խեղճ Զոնգին քանի կտոր պիտի լինէր, եթէ իսկոյն դաշոյնը չհանէր, չկտրէր իւր քղանցքը և չփախչէր: Չրուշանը տեսնելով, որ ոտները արդէն կոտրուել են և չէ կարող վազել ու նրան բռնել՝ աղաչում է, որ գոնէ գալ և իրան սպանէ, քանի որ առանց ոտի ապրել չպիտի կարողանայ: Զոնգին համաձայնում է, միայն պահանջում է, որ մի կերպ հեռանայ նիզակից: Չրուշանն էլ քաշքաշուելով հեռանում է նիզակից և սպասում մահուան: Զոնգին մօտենում, ահագին դժուարութեամբ վերցնում է նիզակը և ձգում չրուշանի գլխին ու փախչում: Մահամերձ՝ չրուշանը սկսում է գոռալ, նրա ձայնից թնդում են լեռներն ու ձորերը, գազանները մտնում իրենց որջերը, մարդիկ ապաստանում իրենց տները: Եւ երբ նա մեռնում է՝ երկիրը խաղաղում է, սար ու ձոր հանգստանում:

Բ Ո Ւ

Մի ուրիշ հսկայ էլ եղել է Զնհէր գիւղում, Բոլ անունով: Սա միշտ մի քառակուսի մետրից աւելի մեծութեան քար գրպանումն է պահելիս եղել, որպէս զի եթէ մինը բարկացնէ՝ գլխովը տալ: Զատ անգամ պատահել է, որ ահագին մեծութեան քարեր վերցրել և Որոտնայ գետն է շարժել: Ամենալավ իւր համար մի կալ շինել՝ նա գնացել հեռու տեղերից ահագին մեծութեան քարեր է բերել, ձգել ձորի լանջին, հող ածել և այսպիսով տեղը հար յել է ու կալը շինել: Դեռ մինչև այժմ էլ մնում է այդ կալը, և կոչւում է Բոլին կալը:



4608 7A-2032

ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ.

Հոչաս գիւղի մելիք Թումանը շարունակ նեղացնելիս է եղել նոյն գիւղի քահանային, այնպէս որ վերջինս, նրանից ազատուելու համար՝ մի անէծքաթուղթ է գրել գցել նրա սենեակն ու ինքը փախել, գլուխն ազատել: Անէծքաթղթի գորութեամբ, մելիքը շուտով կորցրել է որդիները, կինը և ամբողջ հարստութիւնը: Վերջապէս հասկանալով, որ այդ բոլոր թշուառութիւնները քահանայի անէծքից են առաջացել, գնում է նրան որոնելու, որպէս զի թողութիւն խնդրէ: Անցնում է շատ քաղաքներ, գալիս հասնում հռոմ, որտեղ իմանում է, որ քահանան վախճանուել է: Յուսահատուած մնում է նա հռոմի մի վանքում իբր լուսարար և միշտ աղօթում իւր հոգու փրկութեան համար: Երեք տարուայ ճգնութիւնից յետոյ ձգում է իւր վերայ տասներկու շղթայ և ասում. «Եթէ ազատուած եմ անէծքից՝ թող այս շղթաները իրենք իրենց արձակուին»: Նոյն գիշերը, երազում երևում են նրան անիծող քահանան Քրիստոսի հետ և ասում. «Մելիք, հրամանաւն Քրիստոսի արձակեմ գբեզ», և իսկոյն շղթաներն արձակում են:

Մի ժամանակ անցնելուց յետոյ, մի օր այս Մելիքը կձում է Պետրոս առաքելի ճկոյթ (ծիծեռն) մատից և պահում բերանում: Իսկոյն սրբերի բոլոր պատկերները վայր են ընկնում: Գալիս են քահանաները և նկատելով մելիքի գողութիւնը՝ կամենում են մասունքը հանել նրա բերանից և իրեն էլ սպանել, սակայն սեղանից մի ձայն է լսում, որ ասում է, թէ մի մերձենաք մելիքին: Ուստի և քահանաները ոչ մի վնաս չեն հասցնում մելիքին, և սա անվտանգ գալիս հասնում է այժմեան Ծիծեռնափանքի տեղը: Այստեղ վաղ ժամանակներից մի շորի ծառ է լինում, որ շրջապատող բոլոր ժողովուրդներից պաշտուելիս է եղել, մինչև անգամ եղջերուները իրենք իրենց գալիս և զոհուելիս են եղել նրան: Ահա այս ծառի մօտ մելիքը շինել է այժմեան տաճարը և ս. Պետրոսի ճկոյթը (ծիծեռնը) նրա մէջ ամփոփել. այս պատճառով էլ վանքը կոչուել է Ծիծեռնափանք, այսինքն ճկոյթի վանք:

Ասում են, թէ այս մասունքը այժմս էլ մնում է ձախ աւանդատան դռան առաջ գտնուած գերեզմանում:

